ԱՐՑԱԽԸ ՏՆՏՀԱՇՎԱՐԿԻ ՆԱԽԱՇԵՄԻՆ

Այսօր տնտհաշվարկը մեծ տարածում է գտել մեր երկրում։ Այն յուրաքանչյուր ադմինիստրատիվ տերիտորիալ միավորման և ազգային պետական կառուցվածքի տնտեսական զարգացման ապագան է։ Իսկ ի՞նչ հեռանկարներ ունի Լեռնային Ղարաբաղն այդ ուղղությամբ։ ԼՂԻՄ-ի Հատուկ կառավարման կոմիտեի կուսակցական ապարատի սոցիալ-տնտեսական բաժնի վարիչ ՕԼԵԳ ԵՍԱՅԱՆԻ հետ մեր թղթակցի ունեցած զրույցը հիմնականում քննում է այդ հարցերը։



— Ձեր տեսակետը արցախյան պրոբլեմի վերաբերյալ։

— Նման հարցադրումը միանգամայն ճիշտ է, երբ պրոբլեմ բառը տվյալ դեպքում դուք օգտագործում եք եզակիով, քանի որ ղարաբաղյան պրոբլեմը իրոք մեկն է։ Ստալինիզմը, որպես ազգային հարցերի քաղաքական հայացքների կողմնորոշման պետական վարքագծի, ազգամիջյան հարաբերությունների ըմբռնման և վճռման հակադեմոկրատական ամբողջական համակարգի դրսևորման տարրերից մեկը, արտահայտվում է Ադրբեջանական ԽՍՀ-ի կազմում ԼՂԻՄ-ի ստեղծումով։ ԼՂԻՄ-ի արհեստական ստեղծումը ավելի շուտ ազգային հարցի գիտակցված աղավաղում էր, որի օրինաչափ հետևանքը ԼՂԻՄ-ի ներկայիս իրադրությունն է։ Մարդ զարմանքից ապշում է, թե ինչպես եղավ, որ քաղաքական ինքնուրույնությունը, որը պետք է զարգանար ի շահ տվյալ ժողովրդի, անհետացավ, իսկ ԼՂԻՄ-ի ինքնավարությունը, որը փաստորեն նույն ժողովրդի մի հատված հարևան ժողովրդի «դրկում» պահելու և «գուրգուրելու» ձև է՝ ի շահ հարևանին, պահպանվեց։

Աներևակայելի է, բայց փաստ է։

Սխալ է ղարաբաղյան շարժման տարիքը հաշվել 1988 թ. փետրվարից, երբ մայր Հայաստանի հետ վերամիավորվելու մեր համազգային իղձը ի շնորհիվ վերակառուցման քաղաքականության, համապետական չափանիշներով, հասարակական դրսևորման ձև ստացավ։ Ինչպես տեսնում ենք, ղարաբաղյան պրոբլեմը նոր չէ, այն չեն հորինել ու չեն ստեղծել ոչ առանձին ծայրահեղականներ, ինչպես կենտրոնական և Ադրբեջանի հանրապետական մամուլը փորձում է ներկայացնել, ոչ էլ անգամ Արցախի ամբողջ հայությունը։ Այդ պրոբլեմը ստեղծել են առանձին մարդիկ, առանց մեզ, և շատ վաղուց (20-ական թվականներին)։ Ուստի, ոչ ոք չպետք է զարմանա, որ Արցախի վերամիավորումը մայր Հայաստանին մեր միակ պրոբլեմն է, որի վճռմամբ օրակարգից կհանվեն նրանով պայմանավորված մի շարք սոցիալ-տնտեսական, կուլտուրական և այլ բնույթի խնդիրներ։ Իմ խոր համոզմամբ, ինչքան շուտ հասնենք այդ խնդրի (վերամիավորման) իրականացմանը, այնքան շատ հնարավորություններ կմնան երկու հարևան ժողովուրդների, այսօր խզված, հարաբերությունների հետագա նորմալացման համար։

Այսօր մեր երկրում մեծ տարածում է ստանում ռեգիոնալ տնտեսավարման եղանակը։ Ի՞նչ կարող եք ասել ԼՂԻՄ-ի լրիվ տնտհաշվարկի անցնելու նախապայմանների մասին։

— Ինչպես հայտնի է, տնտհաշվարկը և ինքնաֆինանսավորումը որպես տնտեսավարման ձև, նրա իրագործումը խորհրդային էկոնոմիկայում, կուսակցության և կառավարության տնտեսական քաղաքականության առանցքային պրոբլեմներից մեկն է։ Վերջին հաշվով, տնտհաշվարկով պետք է աշխատեն ոչ միայն առանձին ձեռնարկություններ, միավորումներ, այլև ամբողջ ճյուղեր, շրջաններ, մարզեր և հանրապետություններ։ Այնպես որ տերիտորիալ տնտհաշվարկը յուրաքանչյուր ադմինիստրատիվ տերիտորիալ միավորման և ազգային պետական կառուցվածքի տնտեսական զարգացման ապագան է։

Ընդհանրապես տնտհաշվարկը, ինչպես գիտենք, ենթադրում է այդ սկզբունքով աշխատող տնտեսական օբյեկտների և սուբյեկտների արտադրական և վարչական ինքնուրույնություն։ Եվ այն, ինչ վերաբերում է ազգային պետական կազմավորումներին, այդ թվում՝ ԼՂԻՄ-ին, ապա նրանց համար, ըստ իս, անհրաժեշտ է տնտեսական և վարչական այնպիսի ինքնուրույնություն, որը կարողանա ապահովել տվյալ ռեգիոնի լիակատար տնտեսական անկախությունը։ Չի կարելի ռեգիոնի տնտեսական անկախությունը նույնացնել տնտեսական և վարչական մեկուսացման հետ։ Սրանք տարբեր հասկացություններ են և բնականաբար ունեն տարբեր իմաստներ։ Ուստի առաջին նախապայմանը տնտեսական ռեգիոնի (ԼՂԻՄ-ի) այնպիսի ինքնուրույնությունն է, որը հնարավորություն կտա նրան սուվերեն տնօրինելու իր աշխարհագրական ամբողջ տարածքը, էկոլոգիական հարստությունը, էկոնոմիկան, նրա ճյուղային կառուցվածքները, կառավարման մեխանիզմը կազմակերպել և զարգացնել, ելնելով մարզի տնտեսական, բնակլիմայական և դեմոգրաֆիկ ռեալ հնարավորություններից։ Դժվար չէ կռահել, որ իրական և լիարժեք ինքնուրույնությունը ենթադրում է հայտնի իմաստով նաև՝ քաղաքական ինքնուրույնություն։ Ուստի ազգային տերիտորիալ մարզերի տնտհաշվարկն ունի ոչ միայն տնտեսական, այլև՝ քաղաքական իմաստ, որը հանգում է նրա քաղաքական ինքնուրույնությանը, առանց որի ամեն մի ինքնուրույնություն թերի կլինի։ Կարծում եմ, ընթերցողը կհասկանա, որ ռեգիոնի տնտհաշվարկի այս կարևոր նախապայմանը մեզ մոտ հիմնականում բացակայում է։

Մյուս կարևոր նախապայմանը դա տնտհաշվարկի ընդհանուր սկզբունքների և տվյալ ռեգիոնում նրա իրականացման առանձնահատկությունների գիտական մշակումն է։ Սա շատ լուրջ և ծավալուն աշխատանք է պահանջում, որից էապես կախված է մարզի սոցիալ-տնտեսական զարգացման հաջողությունը։ Պետք է նշել, որ այս հարցում մեզ զգալի օգնություն են ցույց տալիս Հայաստանի գիտական կազմակերպությունները և գիտնականները։ Դրանց շարքում ես կուզենայի առանձնացնել հանրապետության գիտությունների ակադեմիայի տնտեսագիտության ինստիտուտը, Երևանի պետական համալսարանի, ժողովրդական տնտեսության ինստիտուտի գիտնականներին, ակադեմիկոս Մ. Քոթանյանին, դոկտոր-պրոֆեսորներ Յու. Մովսիսյանին, Յու. Սուվարյանին, Ս. Մելքումյանին և ուրիշների։ Չեմ կարող չնշել Մոսկվայի մի շարք հայ գիտնականների հայրենանվեր աշխատանքն այս ուղղությամբ։

Նշված ընկերների հետ համատեղ մեր աշխատանքներն այս ուղղությամբ մոտենում են ավարտին և մոտ ժամանակներս, ամենայն հավանականությամբ, կհավաքվենք ընդհանուր քննարկման։

Ռեգիոնալ տնտհաշվարկի շատ կարևոր նախապայման ես կհամարեի նաև մարզի ամբողջ տարածքում գոյություն ունեցող բոլոր հիմնարկությունների և կազմակերպությունների նկատմամբ մարզի ղեկավար մարմինների իրավասության տարածումը։ Համոզված եմ, որ ընթերցողը զարմանքով կընդունի այսպիսի բնորոշումը, քանի որ այն ընդունված չէ նորմալ պայմանների համար։ Բայց հենց բանն այն է, որ հարցը, որի մասին պետք է խոսեմ, ինքնին աննորմալ է։ Խոսքը վերաբերում է նրան, որ ԼՂԻՄ-ի տարածքում գոյություն ունեցող մի շարք ձեռնարկություններ չեն համապատասխանում իրենց կոչմանը, և որևէ լուրջ դեր չեն խաղում մարզի սոցիալ-տնտեսական զարգացման համար։

ՄԵՐ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԸ

Օրինակ. «Ագրոյուղշին» հանրապետական միավորման կապալային № 12 շարժական մեքենայացված շարասյունը տեղակայված է մարզի տարածքում, բայց 1988 թվականի համար նախատեսված մոտ 3 միլիոն ռուբլու շինմոնտաժային աշխատանքներից միայն 250 հազար ռուբլին է բաժին ընկնում մարզին, այն էլ միայն Շուշիի շրջանի համար, չնայած այն բանին, որ հանրապետության կառավարության որոշման համաձայն, սոցիալ-տնտեսական ծանր պայմաններում գտնվող Հադրութի շրջանի համար նախատեսված էր կառուցել 19 կմ երկարության ջրամատակարարման գծեր (87—90 թթ. համար)։

Եվս մեկ օրինակ. Սարսանգի ջրամբարը իր բոլոր կառույցներով գտնվում է Մարտակերտի շրջանի տարածքում, իսկ նրա վարչությունը ոչ միայն շրջանից, այլև մարզից դուրս՝ հարևան Միր-Բաշիր քաղաքում (գլուխը այստեղ, գլխարկը՝ որտե՞ղ)։ Դրա շնորհիվ հսկայական ջրային պաշարների ավելի պակաս քան 10 տոկոսն է բաժին ընկնում մարզին, որի հողագործությունն այսօր, առանց չափազանցության, խեղդվում է ծանր երաշտից։ Պետք է նշել, որ տարիներ շարունակ մարզի համար նախատեսված կապիտալ ներդրումների առյուծի բաժինը հատկացվել է Սարսանգի շինարարությանը (ֆինանսական բումերանգ)։

Մեկ ուրիշ օրինակ. Նույն Մարտակերտի շրջանում 70-ական թվականներին ստեղծվել է «Ադրերկրաբան» վարչության գեոֆիզիկական խումբ, որին հատկացվել են արտադրական, տնտեսական, կենցաղային բոլոր պայմանները, սակայն առ այսօր նրա կողմից իրականացվող երկրաբանահետազոտական աշխատանքները գլխավորապես կատարվում են մարզի սահմաններից դուրս։ Այս այն դեպքում, երբ մարզի տարածքում երկրաբանական աշխատանքների աստիճանը ձգտում է 0-ի։ Նույն՝ Մարտակերտի շրջանում 1665 հեկտար լավագույն հողատարածություններ է զբաղեցնում Ադրբեջանի գիտությունների ակադեմիայի ղարաբաղյան գիտափորձարարական բազան։ Իր ամբողջ գոյության ընթացքում շրջանի և ամբողջ մարզի և ոչ մի տնտեսությունում փորձարարական աշխատանքներ չի կատարել։ 200 գիտական մասնագետներից միայն չորսն են հայ։

Նման օրինակները շատ-շատ են։ Դրանք նորություններ չեն։ Գիտեն բոլորը, շատ է ասվել, ես միայն կրկնում եմ նրա համար, որպեսզի հիմնավորեմ մարզի քաղաքական ինքնուրույնության անհրաժեշտությունը նման պրոբլեմները հաղթահարելու համար, առանց որի լիարժեք տնտհաշվարկի մասին խոսք լինել չի կարող։

— Բացի նշվածից, գոյություն ունե՞ն, արդյոք, մարզի՝ իրական տնտհաշվարկի անցնելու այլ պրոբլեմներ։

— Այո։ Եթե արտադրական ձեռնարկությունների համար ծախսերի համեմատությամբ եկամուտների գերազանցությունը տնտհաշվարկի հիմնական պայմանն է, ապա մարզի համար, դա անհրաժեշտ լինելով, միաժամանակ խիստ անբավարար է։ Ներկայումս մարզի ֆինանսական եկամուտները գերազանցում են ծախսերին։ Բայց մարզը տնտեսապես շարունակում է ապրել նկատելի կախվածության պայմաններում։ Մարզի տնտեսության ներկայիս ճյուղային և ներճյուղային կառուցվածքը չի կարող ապահովել զարգացման շատ բարձր տեմպեր, եթե անգամ օգտագործենք ոչ միայն 400 միլիոն, այլև նկատելիորեն շատ։ Օրինակ, մարզը արտադրում է մոտ 4—4,5 միլիոն դեկալիտր գինու և կոնյակի հումք, իսկ պատրաստի արտադրանքի ձևով թողարկում է ավելի պակաս քան 1 միլիոն դեկալիտր, որի իրացումից մարզի բյուջեն ստանում է 35—40 միլիոն շրջանառության հարկ։ Ինչպես տեսնում ենք, եթե հումքի արտադրությունը զարգացման բարձր մակարդակ ունի, ապա վերամշակող արդյունաբերությունը զգալիորեն հետ է մնում։ Դա վերաբերում է ոչ միայն գինեգործությանը, այլև գյուղատնտեսական մթերքների բոլոր տեսակների արդյունաբերական վերամշակմանը։ Մեզ համար պրոբլեմային է դարձել խոզի մսի իրացումը։ Այդ նպատակով այս օրերին աշխատանքներ են տարվում Հայկական և Վրացական հանրապետությունների համազգային կազմակերպությունների հետ մեզ համար ձեռնտու պայմաններով միսը իրացնելու համար։ Իսկ եթե մենք ունենայինք մսի արդյունաբերական վերամշակման անհրաժեշտ արտադրական հզորություններ, ապա կվաճառեինք ոչ թե միսը, այլ՝ պատրաստի արտադրանքը, որը անհամեմատ ավելի մեծ եկամուտներ կբերեր մարզին։ Այսօր մարզում այնպիսի ամենօրյա օգտագործման առաջին անհրաժեշտության ապրանքներ, ինչպիսիք են հրուշակեղենի, կոնֆետի, նպարեղենի, հագուստի, ժողովրդական սպառման ապրանքների արտադրությունը հիմնականում բացակայում է։

Շատ նկատելի է մարզի անասնապահության կախվածությունը մարզի սահմաններից դուրս ստացվող խտացված և այլ կերատեսակների ստացումից։ Մարզը սեփական բազա չունի։

Բառիս բուն իմաստով կատաստրոֆիկ վիճակում է մարզի սեփական շինարարական ինդուստրիան։ Բոլոր գլխավոր շինանյութերի հիմնական բաժինը մենք, դժբախտաբար, ներմուծում ենք։ Առանց ամփոփելու նշված մի շարք այլ օրինակներ, դժվար չէ կռահել, որ էկոնոմիկայի այսպիսի կառուցվածքը իր զարգացման ներկայիս մակարդակով չի կարող ունենալ լիարժեք տնտեսական ինքնուրույնություն և անկախություն։

Իմ կարծիքով, սա մարզի գլխավոր տնտեսական պրոբլեմն է, որի վճռումը էապես կախված է մարզի քաղաքական պրոբլեմի վճռումից։

Տնտհաշվարկի համար շատ կարևոր է մարզի տնտեսական կառավարման նոր մեխանիզմի ստեղծումը, որը փաստորեն ընթացքի մեջ է։ Այս ուղղությամբ որոշ քայլեր է կատարվել ի հաշիվ ստեղծված տերիտորիալ տնտհաշվարկային միավորումների, սակայն դա դեռ անբավարար է կառավարման ցանկալի կառուցվածքը ունենալու համար։

— Ի՞նչ կասեիք ԼՂԻՄ-ի և Հայաստանի տնտեսական կապերի մասին։

— Ես ընդհանրապես կուզենայի, որ շուտ գար այն ժամանակը, երբ ղարաբաղցուն նման հարցով չդիմեին։ Չէ՞ որ ոչ ոք չի հարցնում, թե ինչպիսի՞ն են, ասենք, Սյունիքի, Լոռվա և Հայաստանի տնտեսական կապերը։

Այսօրվա դրությամբ մարզի և հանրապետության կողմից որոշ հանդիպակաց քայլեր են կատարվել, բայց դրանք ընդհանուր առմամբ հեռու են բավարար կոչվելուց, մանավանդ էկոնոմիկայի ասպարեզում։ Դա հիմնականում պայմանավորված է մեր ազգին վերահաս աղետով, մարզի կուսակցական և խորհրդային ղեկավար մարմինների բացակայությամբ, Հատուկ կառավարման կոմիտեի իրավունքների սահմանափակվածությամբ և որոշ կարևոր հարցերում նրա անհետևողականությամբ, և եթե չվիրավորվեն նաև՝ Հայաստանի հանրապետական կազմակերպությունների ոչ միշտ սկզբունքային և վճռական մոտեցմամբ։ Այնուհանդերձ, գոյություն ունեցող կոնտակտների և օգնության մասին կուզենայի նշել։

Այսօր Ստեփանակերտում գործում է «Արարատշին» միավորման № 83 շինմոնտաժային վարչությունը, որը զբաղվում է քաղաքացիական և արդյունաբերական օբյեկտների շինարարությամբ։ Ցավոք, այդ կազմակերպության տեխնիկական բազան էապես ընդլայնման կարիք ունի։

Վերջերս շինանյութերի ձեռքբերման հարցով դիմել ենք Գորիսի շրջանի ղեկավարությանը, Ռ. Ալեքսանյանին, որը սիրով ընդառաջել է։ Այժմ մեր շինարարական կազմակերպությունները զբաղված են այս հարցի գործնական վճռմամբ։

Օրերս ՀԽՍՀ ավտոտրանսպորտի մինիստրությունը, օգնության կարգով, անվճար, մարզի տնտեսություններին է հատկացրել օգտագործված մեկ գանձով 50 բեռնատար ավտոմեքենաներ, որոնց կարիքը մենք շատ ենք զգում և որի համար, օգտվելով առիթից, հայտնում ենք մեր երախտագիտությունը։

Երևանի և հանրապետության շատ ձեռնարկություններ օգնություն են ցույց տվել և ցույց են տալիս Արցախի իրենց նույնատիպ ձեռնարկություններին։ Այսպիսի երևույթների բարոյական իմաստը և նշանակությունը արցախցիների համար շատ ավելի կարևոր է, քան տնտեսականը։ Եվ դա պետք է հաշվի առնել։

Խոսքը զուտ տնտեսական կապի մասին է, ուստի չեմ անդրադառնում մյուս բոլոր ասպարեզներում Հայաստանի աջակցությանը։

Նախնական աշխատանքներ են տարվում արտասահմանյան հայազգի ներկայացուցիչների հետ տնտեսական օգնության և տնտեսական համագործակցության շուրջը։

Այս ուղղությամբ առաջին լուրջ քայլերը կատարված են։ Հայաստանի, Սփյուռքի և Արցախի բարեգործական կազմակերպությունների հայրենանվեր աշխատանքի շնորհիվ Ստեփանակերտի բուժհիմնարկները նկատելի օգնություն են ստացել։ Ուրախալի է, որ այս կապերը զարգացման տենդենց ունեն։

— Ձեր մաղթանքը «Ավանգարդի» ընթերցողներին։

— Միասնություն։

Հարցազրույցը վարեց
ՋՈՒԼԻԵՏԱ ՄԽԻՅԱՆԸ